

բուժեանդ, յորմէ ակն ունիմք զամենայն բարիս: Պահեալ պահպանեսցէ զձեզ Աստուած. ամէն:

Գրեցաւ յամի Ռկի ըստ թուականութեան Հայոց. իսկ ըստ Հռովմէական համարոյ յամի Քրիստոսի 1613 ի ԻԲ. աւուր մարտի. կնքեալ կնքովն Մելքիսեդեկ կաթողիկոսի:

Թարգմանեցաւ (ի լատիներէն) յիտալական թարգմանութենէ անտի Բարդողովմեայ Արքարու:

Բզովիուս եւ իրեն հետեւելով Պիատտի¹⁸ կ'ըսեն թէ թղթաբերն եղած ըլլայ Չաքարիա վարդապետ: Այս ըմբռնումը արդիւնքն է Մելքիսեդեկի թղթոյն սխալ հասկացողութեան. հոն խօսքը 1610ին գրուած թուղթի մասին է, զոր, ինչպէս տեսանք, ստուգիւ բերած յանձնած էր Չաքարիա 1611ին: 1613ին Չաքարիա կը գտնուէր Կ. Պոլիս պատրիարքական աթոռին վրայ, զոր կ'ականարկէ նաեւ Մելքիսեդեկ, «կարգեցաք մեք զՉաքարիա յետեղակալ մեր ի վերայ Եկեղեցւոյն Կ. Պոլսոյ, մերժելով անտի ի բաց զեպիսկոպոսն դայն գոռոզ», այսինքն զԳրիգոր Կեսարացի: Ունինք Պօղոս Ե. ի թուղթը ուղղուած առ Չաքարիա 1613 Հոկտեմբեր 20ին ի Կ. Պոլիս:

Կարեւոր է ուշադրութեան առնել Մելքիսեդեկի թուղթին այն տեղիքը, ուր խօսք կ'ըլլայ իրեն դէմ յարուցուած հալածանքներու

¹⁸ G. Piatti, Storia critico-cronologica de' Romani Pontefici, t. 12 (Napoli 1768), էջ 63. Հմտ. Գալէմբեարեան, Կենսագրութիւններ, էջ 55—56: